«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցի դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ <<N 146 մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Ռուստամյան Արփինե

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1. Ներածություն…….. 3
2. Սովորողների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ, ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը……4
3. Պարապմունքի պլան - էքսկուրսիա մոտակա զբոսայգի, <<Աշուն>>……5
4. Եզրակացություն ……...16
5. Գրականության ցանկ ……...17

Ներածություն

Էքսկուրսիան այցելություն է դեպքի տեսարժան վայրեր, թանգարաններ, պատմամշակույթային հուշարձաններ: Այն ինչը երեխան տեսնում է, տպավորվում նրա գիտակցության մեջ: Էքսկուրսիան կարող է վարել աստիառակը, ուսուցիչը կամ էքսքուրսավարը, որոնց մեկնաբանությանբ երեխան սովորում է ճիշտ ընկալել տեսածը, ցուցադրածը: Էքսկուրսիաները և մշակույթը շատ կարևոր են այն առումով, որ երեխան կարևորում է իրեն փոխանցած պատմապշակույթային ժառանգությունը, դառնում նրա կրողը և փոխանցողը հետագա սերունդների: Էքսկուրսիաները նաև պատմամշակութային արժեքների պահպանման և դրանց անվտանգության ապահովման, հուշարձանների անխաթարության միջոց են: Էքսկուրսիաները նաև անցկացնում են բնության մեջ՝ առօրյաում: Երեխաները բնությունից օժտված են հետաքրքրասիրությամբ, նրանք աշխուժություն են ցուցաբերում իրենց շրջապատող աշխարհի մասին տեղեկություններ ստանալիս:

Զբոսանքների և էքսկուսիաների ժամանակ անցկացվող դիտումների, զրուցների շնորհիվ, երեխաները անմիջականորեն առնչվում են բնությանը, ձեռք բերում որոշակի գիտելիքներ:

Սովորողների ճանաչողական հմտությունները գործնական կարողություններ և ստեղծագործական մտածողությունը զարգավնող առաջադրանքների կիրառումը:

Էքսկուրսիաները ունեն ճանաչողական մեծ նշանակություն: Երեխաները խորությամբ ճանաչում են իրենց հայրենիքը , ծննդավայրը, նրա ռազմավարական նշանակությունը, բնության գողտրիկ վայրերը, ծանոթանում են բնական հարստություններին, գիտության մշակութային ձեռքմերումներին: Ընդլայնվում են աշխարհաճանաչողությունը, ձևավորում աշխարհայացք, հարստացնում են գիտելիքները, զարգացնում հետաքրքրասիրություն, ինքնաճանաչում, ինքնագործունեություն, դաստիարակում են սեր դեպի բնությունը, հուշարձանները, դեպի ընկերը և մարդը, նպաստում են միջանձնային շփումներին: Երեխան դառնում է ավելի համարձակ, բանիմաց, առողջ և կոփվում է ֆիզիկապես:

Էքսկուրսիաները լինում են թեմատիկ և ընդհանուր: Ընդհանուր էքսկուրսիաները ավելի համընդգրկուն են, իսկ թեմատիկները կարող են լինել պատմական, արվեստագիտական:

Թեմատիկ էքսկուրսիաները ունեն կոնկրետ ուղղվածություն: Ըստ անցկացման վայրի էքսկուրսիաները կարող են լինել բնակավայրի որևէ թաղամասում, թանգարանում, բնակավայրից դուրս, սրբավայրերում: Կարող են կազմակերպվել նաև արտադրական էքսկուրսիաներ որևէ գործարանում, հանքաշահագործման վայրում:

Կրթադաստիրակչական նպատակներով կարելի է կիրառել նաև ուսումնական էքսկուրսիան:

Ուսումնական էքսկուրսիան անցնելուց առաջ դաստիարակը անց է կացնում զրույց, քննարկում: Ուսումնական էքսկուրսիան գործընթացի կազմակերպման մի ձև է, պարապմունքի մի տեսակ, գործնականում տեսական գիտելիքների կիրառում:

Էքսկուրսիաները լինում են դաստիարակչական, ձևավորում է գեղագիտական դաստիրակություն, հայրենասիրություն, բնության նկատմամբ սիրո դաստիրակում:

Զարգացնող էքսկուրսիան – դիտումների, ուշադրության, հիշողության զարգացումն է:

Ժամանակակից կրթության խնդիրն է յուրաքանչյուր երեխայի գիտակցության մեջ ձևավորել հայրենասիրական վերաբերմունք, ուսումնական գործընթացը բովանդակալից դարձնել երեխայի համար՝ առաջացնելով հետաքրքրություն, ձևավորել ինքնուրույնություն: Իրավասությունը ներառում է ուսումնասիրելու, վերլուծելու, եզրակացություններ անելու և այլ կարողություններ:

Այս առումով էլ կարևորում ենք նպատակային էքսկուրսիաների դերը, որոնք նպաստում են երեխաների մտավոր զարգացումը, հարստացնում նրան ճանաչողական գործունեությունը, երևակայությունը, ձևավորում է գեղագիտական վերաբերմունք բնության, շրջակա աշխարհի , մշակույթի հանդեպ: Մեր աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ էքսկուրսիաները զարգացնում են երեխայի ճաշակը, գրավիչ, հետաքրքիր դարձնելու մեր առօրյան:

Պարապմունքների աշխատանքների կատարման ընթացքում հարկավոր է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որոնցում երեխաները կարող են ինքնուրույն գործել, փնտրել և գտնել լուծումներ:

Նման գործունեությունը նպաստում է դպրոցականի մտավոր կարողությունների ընդլայնմանը: Արդյունքում ակտիվանում է նրանց ստեղծագործական ընդունակությունները:

Պարապմունքի պլան

Էքսկուրսիաների և մշակույթային այցի դերը սաների զարգացման գործում

Ինտեգրված պարապմունքներ – ապլիկացիա, երաժշտություն

Միջին խումբ – Ինչուիկներ

Տևողությունը – 25 րոպե

Պարապմունքի պլան

Թեման՝ <<Աշուն>> էքսկուրսիա մոտակա զբոսայգի:

Նպատակը – Գաղափար տալ աշնան մասին, սովորեցնել ճանաչել ու զգալ բնության մեջ կատարվող եղանակային փոփոխությունները, ձևավորել ընդհանուր պատկերացում աշնան մանին, ինքնուրույն մտքերն արտահայտելու, հարկ եղած դեպքում ձեռք բերած գիտելիքներն օգտագործելու կարողություն: Ձևավորել գեղեցիկի ընկալում, դիտողականություն և դաստիարակել գեղագիտական ճաշակ:

Զարգացնող - զարգացնել վերլուծական մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը:

Դաստիարակչական – դաստիարակել սեր հայրենիքի և մշակութի հանդեպ, սովորեցնել սիրել և պահպանել բնությունը և մեր մշակույթը:

Բառապաշարի հարստացում - գործնականորեն իրականացնել էքսկուրսիա, մշակույթ, տերևաթափ, ոսկե, գունզգույն, անձրևոտ, ոսկեհեր, բառերի ուսուցմանը:

Նախապատրաստում – բացատրել էքսկուրսիայի նպատակը և երեխաներին շարք կանգնեցրած տանել էքսկուրսիայի վայրը՝ մանկապարտեզից ոչ հեռու զբոսայգի:

Ընթացքը - Դիտարկման փուլ, նպատակահարմար է զրուցը սկսել հանելուկով:

Հանելուկ Ղ. Աղայան - <<Այդ ե՞րբ է լինում>>

Օրն է կարճանում,

Ծառն է մերկանում

Անձրև է մաղում

- Այդ երբ է լինում: (Աշնանը)

Երեխաների պատասխանները լսելուց հետո առաջարկել նկարագրել օրվա եղանակը:

Դ – Այժմ տարվա ո՞ր եղանակն է

Ե - Աշուն է:

Դ – Երեխաներ այժմ եկեք պատմենք, թե ի՞նչ գիտեք աշնան մասին:

Դ – Ինչպիսի՞ն է աշունը: Օրացույցի ո՞ր օրվանից է սկսվում աշունը: Աշունը սկսվում է սեպտեմբերի մեկով:

Դ – Ո՞րոնք են աշնան ամիսները: (Աշնան ամիսներն են՝ Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր):

Դ – Ի՞նչ տոներ ենք նշում աշնանը: /Գիտելիքի օրը, Անկախության օրը, Ուսուցչի օրը, Մեր մայրաքաղաքի տոնը, Բերքի տոնը/:

Դ – Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում կենդանական և բուսական աշխարհում, ո՞ր թռչուններն են չվում տաք երկրներ, ո՞ր կենդանին է ձագուկներ ունենում աշնանը:

Ե – Աշնանը ձագուկներ է ունենում նապաստակը:

Ե – Չվում են տաք երկրներ՝ ծիծեռնակը, արագիլը, կռունկները, սարյակները:

Դ – Իսկ մեզ մոտ ո՞ր թռչուններն են մնում:

Ե – Կաչաղակները, ճնճղուկները, ագռավները:

Դ – Աշնան սկզբում երեխաներ եղանակը տաք է, իսկ վերջում սկսում են օրերը ցրտել, երկինքը դառնում է մռայլ, արևը չի երևում:

Դ – Երեխաներ մենք նկարագրեցինք աշունը, իսկ հիմա եկեք դիտենք տերևները ինչպիսին են:

Ե – Գույնզգույն, ոսկե, մեծ, փոքր, խշխշան:

Դ – Երեխաներ հիմա դուք էլ խառնվեք տերևների հետ և զգացեք նրանց բույրն ու գեղեցկությունը: Իսկ հիմա եկեք հավաքենք տերևներ, որպեսզի ապլիկացիա պարապմունքի ժամանակ, մեր հավաքած տերևներից սոսնձելով ստանան ճուտիկներ: Երեխաներից մի քանիսը առաջարկեցին որ այս հավաքած տերևներից նվիրելու են իրենց մայրիկներին:

Դ – Երեխաներ եկեք շարունակենք մեր էքսկուրսիան և զրուցենք մշակույթի մասին: Ի՞նչ է մշակույթ:

Երեխաներ տոնակատարությունները, արարողություններն, կերպարվեստը,երաժշտությունը, պարարվեստը, մարզարվեստը, թատրոնը, թանգարանները՝ դրանք մշակույթի օջախներն են:

Դ - Ի՞նչ է կերպարվեստ:

Կերպարվեստը դա մի բաժին է, որը միավորում է գեղանկարչությունը, քանդակագործությունը, դեկորատիվ նկարչությունը, ծեփը ապլիկացիան:

Մենք ունենք հայտնի կերպարվեստի վարպետներ Մարտիրոս Սարյանը, Եղիշե Թադևոսյանը: Նրանց ստեղծագործությունների հիման վրա Հայաստանում ստեղծվեց կերպարվեստի դպրոցներ:



Դ – Ի՞նչ է երաժշտություն:

Հայկական երաժշտությունը, հայ ժողովրդի դարավոր երաժշտական մշակույթն է: Մեր քաղաքում կան հայտնի երաժիշտների անունով երաժշտական դպրոցներ:

Դ – Ի՞նչ երաժշտական գործիքներ գիտեք:

Ե – Դաշնամուր, շեփոր, քանոն, թմբուկ, ջութակ:

Դ – Ի՞նչ է պարարվեստ:

Պարը արվեստի ձև է, որն արտահայտվում է մարմնի ռիթմիկ շարժումների միջոցով: Պարն անբաժան է երաժշտությունից և կատարվում է նրա ուղեկցությամբ: Կան նաև պարարվեստի դպրոցներ և պարերի տեսակներ՝ դասական, ռոմանտիկ, ժամանակակից և մեր հայկական՝ ժողովրդական:

Երեխաներ՝ յուրաքանչյուր ազգ ունի իր ազգային ժողովրդական պարերը:

Դ – Ի՞նչ է թատրոն:

Թատրոնը դա թատերական բեմն է, որտեղ խաղում են դերասաններ:Թատրոնները լինում են երաժշտական, դրամա, կատագերգություն, ողբերգություն:

Դ – Ի՞նչ է թանգարան:





Թանգարանը դա կառույց է, որտեղ պահպանվում են պատմական և հեգևոր մշակույթային հուշարձանները: Մենք ունենք <<Մատենադարան>> շենքը, Հայաստանի պատմության թանգարանը:

Դ – Ի՞նչ է մարզարվեստ:

Սպորտը դա ֆիզիկական գոծունեություն է

Գոյություն ունի սպորտի հարյուրավոր տեսակներ:

Ի՞նչ մարզաձևեր գիտեք երեխաներ:

Ե – Ֆուտբոլ, բասկետբոլ, ձիասպորտ, սուսերամարտ, հեծանվասպորտ:

Դ – Կան նաև ձմեռային սպորտաձևեր՝ դահուկային, չմշկավազք, գեղասահաք, հոկեյ:

Երեխաներ կան շատ սպորտդպրոցներ, որտեղ մարզվում են մարզիկներ:

Ապա նայեք մեր զբոսայգում կան հատուկ մարզասարքեր, որոնք նախատեսված են

մարզվելու համար: Այստեղ ամեն օր տարբեր տարիքի մարդիկ մարզվում են:

Սպորտով զբաղվելը օգտակար է առողջության համար: Սպորտն օգնում է ընկեր-

ներ ձեռք բերելու և մտերմանալու նրանց հետ: Խաղը միավորում է մարդկանց: Այ

դուք երբ խաղում եք միասին, մտերմանում եք, դառնում եք ընկերասեր, հարգում եք

միմյանց:

Երոխաներ մի ուրիշ անգամ մենք էքսկուրսիա կկազմակերպենք մարզադպրոց: Իսկ հիմա եկեք ավարտենք մեր էքսկուրսիան և ամփոփենք, ի՞նչ սովորեցինք և ծանոթացանք այսօր:

Ամփոփում:

Այսօր մենք ամրապնդեցինք գիտելիքները աշնան մասին, բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին, ձևավորեցինք պատկերացումները աշնանային տոնակատարությունների վերաբերյալ, սեր հայրենիքի հանդեպ, ազգային մշակույթին և նրա ձևերին, սովորեցինք պահպանել մեր բնությունը և ազգայինը:

Ինտեգրված պարապմունքներ.

Երաժշտություն

Ապլիկացիա

Երաժշտություն – Ռուզաննա Հակոբյան <<Բարև աշուն>>

Նպատակը – Սովորեցնել ունկնդրել երաժշտությունը և աշնանային տպավորություն-
Ները:

Ապլիկացիա

Թեման - <<Ճուտիկներ տերևներից>>

Նպատակը – Սովորեցնել երեխաներին տերևներից ստանալ ճուտիկի մարմնի մասե-
ը՝ պահպանելով ձևն ու կառուցվածքը: Զարգացնել նրանց երևակայութ-
յունը, ստեղծագործական միտքը: Ամրապնդել սոսնձով փակցնելու տեխ-
նիկան:

Ընթացքը - Երաժշտությունը լսելուց հետո երեխաներին տրամադրել և հիշեցնել նախորդ օրվա մասին, էքսկուրսիայի ժամանակ ինչպիսին էր եղանակը (ցուրտ էր, մռայլ, քամի), հավաքեցինք տերևներ: Այսօր այդ հավաքած տերևներից սոսնձելով սպիտակ թղթի վրա կստանանք ճուտիկներ: Երեխաներ եկեք արագ պատրաստենք ճուտիկներին և կերակրենք: Չէ՞ որ նրանք մրսում են, ցուրտ ՝ և քաղցած են, պետք է կերակրենք:

Լսել <<Արևներ>> խմբի <<Ճուտիկներ>> երգը: Երգի ներքո առաջարկել երեխաներին փակցնել ճուտիկներին:

Դարապմունքի ամփոփում:

Այսօր աշնանային տերևներից ստացանք ճուտիկներ, ձևավորեցի գեղագիտական ճաշակ, ստեղծագործական երևակայություն, դաստիարակեցի մաքուր և կոկիկ աշխատելու կարողություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Միջին խմբի դաստիարակ՝ Լուսինե Զաքարյանս, նպատակ էի դրել էքսկուրսիայի ժամանակ երեխաներին ծանոթացնել, սովորեցնել, գաղափար տալ, որ էքսկուրսիայի և մշակույթի էությունը կայանում է բացատրությամբ, ցուցադրմամբ և շրջագայության միջոցով:

Այն ինչը երեխան տեսնում է , տպավորվում է նրա գիտակցության մեջ:

Էքսկուրսիան կարող է վարել դաստիարակը և էքսկուրսավարը, որոնց մեկնաբանությամբ երեխան սովորում է ճիշտ ընկալել իր տեսածը ցուցադրածը: Բնության մեջ անցկացվող էքսկուրսիայի ժամանակ հնարավորություն ստացա գաղափար տալ հայրենագիտական և բնության մեջ փոփոխությունների մասին:

Կատարելագործվեց մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործաբար աշխատելու, գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունը: Ձևավորվեց գեղագիտական ճաշակ, հոգևոր աժեքները գնահատելու կարողություն, սեր՝ արվեստի ստեղծագործությունների հանդեպ, նպաստեց երեխաների հայրենասիրական ոգու բարձրացմանը:

Ես ստացա դրական արդյունք և իրականացավ իմ նպատակը, ցանկալի կլիներ, որ հայտնի հեղինակների բնապատկերներ լիներ, որ ես օգտագործեի պարապմունքի ժամանակ:

Գրականություն

1. Խոսքի զարգացման պարապմունքների խմբի ուսումնամեթոդական ձեռնարկ:
   Հ. Միտոյան
   Լ. Սմբատյան Երևան 2013
   Լ. Սարգսյան

2. Նախաշավիղ 8. 2023
3. Նախաշավիղ 4. 2013
4. Մանկապարտեզի միջին խմբի /4 – 5տ/ կրթական համալիր ծրագիր:
   Հ. Միտոյան
   Ս. Մարության
   Լ. Սմբատյան
   Ժ. Ավետիսյան և ուրիշներ
5. Համացանց